ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

OPEN SOCIETY
FOUNDATIONS

ԶԵԿՈՒՅՑ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 2013 Թ-ԻՆ

Վանաձոր 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ……3

ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ……..5

2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԴԻՄԱԾ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ ...……8

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ……...14

- Զորակոչի կազմակերպման գործընթացի և նախազորակոչային տարիքի անձանց և զորակոչիկների փորձաքննության իրականացման խնդիրները

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ.16

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԸ ……18

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԵՊՔԵՐԸ…….....25

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ……..……26

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ……28

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ……..30

- Հավելված 1……...……30
- Հավելված 2……..……..……....32

Զեկույցի հեղինակներ՝

Արթուր Սաքունց

Արմինե Սադիկյան

Նազելի Մովսեսյան

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ՆԱԽԱԲԱՆ

2013 թվականին Հայաստանի Հանրապետության զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ զեկույցում ամփոփված են տեղեկություններ, որոնք ձեռք են բերվել ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից զինծառայողների և զորակոչիկների իրավունքների պաշտպանության իրականացման արդյունքում: Զեկույցում ներկայացված են.

- 2013 թ-ի գարնանային և ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների պաշտպանության արդյունքում բացահայտված խնդիրները
- Զինված ուժերից վաղաժամկետ ազատվող սպաների իրավական աջակցության ընթացքում բացահայտված խնդիրները
- Զինված ուժերում մահացության դեպքերի նկարագրությունը և համեմատական վիճակագրությունը 2010-2013 թթ. ժամանակահատվածում
- Զինված ուժերում մահացության դեպքերով քրեական գործերի նախաքննության և դատաքննության ընթացքում բացահայտված խնդիրները
- Զինվորական ծառայության և զորակոչի վերաբերյալ օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները և նրանցով պայմանավորված խնդիրները:

Զեկույցում ձևակերպված են համակարգային խնդիրները և ներկայացված են առաջարկություններ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և ապահովման մակարդակի բարձրացման ուղղությամբ:

ԶՈՐԱԿՈՉԸ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զորակոչի կազմակերպման, զորակոչիկների առողջական վիճակի գնության, զինծառայությանը զորակոչիկների պիտանիության հարցերը կարգավորող իրավական նորմերը սահմանված են.

- «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով, որը կարգավորում է զինվորական հաշվառման, զինվորական ծառայության նախապատրաստության, զորակոչի կազմակերպման և իրականացման, զինվորական ծառայությունից տարկետման և ազատման հիմքերը:
- «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության հիմքերը, կազմակերպումը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կառուցվածքը, կազմակերպման ու գործունեության սկզբունքները, գործառույթները, դրանց ղեկավարման, կառավարման, տեղակայման և օգտագործման հետ կապված հարաբերությունները, այլ զորքերի խնդիրները, ինչպես նաև պաշտպանության բնագավառում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, կազմակերպությունների գործառույթները, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների իրավունքները և պարտականությունները
- ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թ-ի 410 հրամանով, որը սահմանում է զորակոչիկների բժշկական փորձաքննության իրականացման կարգը և իրականացնող մարմիններին:

2013 թվականի ապրիլի 8-ին ուժը կորցրած ճանաչվեց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի «Զինապարտների բժշկական և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության կարգը հաստատելու մասին» N 175-Ն հրամանը, որը փոխարինվեց ՀՀ ՊՆ 410 հրամանով (այսուհետ՝ Հրաման): Արձանագրենք, որ Հրամանը ուժի մեջ մտավ 2013 թ-ի հունիսի 11-ին՝ գարնանային զորակոչի ընթացքում: Այսինքն, զորակոչիկների մի մասի փորձաքննությունը իրականացվել է ՀՀ ՊՆ 175 հրամանով, իսկ մյուս մասը 410 հրամանով, որը հանդիսանում է իրավական պետության իրավական որոշակիության սկզբունքի խախտում:

Հրամանով հստակ սահմանված չեն մի շարք հիվանդությունների ծանրության աստիճանների չափանիշները, որի արդյունքում նույն ծանրությամբ հիվանդության առկայությամբ զորակոչիկը կարող է համարվել պիտանի կամ ոչ պիտանի զինվորական ծառայությանը: Նման անորոշությունը հանդիսանում է կոռուպցիոն ռիսկերի հիմք:

Նկատենք, որ Հայաստանի Հանրապետությունը որպես Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) անդամ նման փաստաթղթի մշակման դեպքում պետք է առաջնորդվի ԱՀԿ-ի չափանիշներով: Այսինքն՝ 410 հրամանում հիվանդությունների դասակարգումը և ծանրության աստիճանները սահմանող չափանիշները պետք է համապատասխանեն ԱՀԿ-ի մոտեցումներին:

Անհրաժեշտ է նշել, որ զորակոչիկների առողջական վիճակի փորձաքննությունն իրականացնող բժշկական հանձնաժողովները և բուժհաստատությունները ախտորոշումները կազմում են ԱՀԿ-ի չափորոշիչներին ոչ համապատասխան ձևակերպումներով կամ ոչ լիարժեք ձևակերպումներով: Նման ախտորոշումների արդյունքում անհնարին է դառնում նույնականացնել զորակոչիկի առողջական վիճակի զննության արդյունքում բացահայտված հիվանդությունը կամ առողջական խնդիրը Հրամանում ներկայացված հիվանդությունների ցանկին: Արդյունքում անհնարին է դառնում ըստ առողջական վիճակի զորակոչիկի՝ զինվորական ծառայությանը պիտանիության խնդրի վերջնական լուծումը:

Նման եզրակացության հանգում ենք կազմակերպություն դիմած զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ բժշկական հանձնաժողովների կողմից կազմած ախտորոշումների փորձագիտական ուսումնասիրության արդյունքների հիման վրա:

Չնայած կազմակերպության կողմից նախկինում բազմիցս բարձրացրած ահազանգերի ու առաջարկների վերաբերյալ ՊՆ ներկայացուցիչների հավաստացիումներին՝ 410 հրամանով վերստին չի կարգավորվել մի քանի հիվանդությունների զուգակցմամբ զինծառայության պիտանիության հարցի լուծումը[1]:

Առանձին հիվանդությունների դեպքում, եթե զորակոչիկը ճանաչվում է պիտանի շարային՝ սահմանափակումով ծառայությանը, մի քանի հիվանդությունների զուգակցման պարագայում պիտանիության հարցի չկարգավորելը հանգեցնում է զինծառայողի կողմից զինվորական պարտականությունների ոչ լիարժեք և ոչ արդյունավետ կատարմանը և, որպես հետևանք, կանոնադրային հարաբերությունների և մարդու իրավունքների խախտումների:

Այսպիսով, 410 հրամանը, փոխարինելով նախկին 175 հրամանին, չի համապատասխանում ԱՀԿ չափանիշներին և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի սկզբունքներին:

[1] http://hcav.am/wp-content/uploads/2012/12/%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_2012.pdf

Զորակոչը և զինծառայությունը կարգավորող օրենսդրության և նրա կիրառման բազմաթիվ խնդիրների վերաբերյալ կազմակերպությունը առաջարկություններ է ներկայացրել ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին և ՀՀ պաշտպանության նախարարությանը:

2013 թ-ի ապրիլի 15-ին ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել են հանրային քննարկումներ և լսումներ՝ բանակ-հասարակություն փոխադարձ կապի ամրապնդմանթեմայով[2], որտեղ կազմակերպությունը ներկայացրել է զինված ուժերում առկա օրենսդրական թերությունները, օրենսդրության կիրառման խնդիրները, զինծառայության ընթացքում կանոնադրային հարաբերությունների խախտման դեպքերը, զինվորների կենսապահովման խնդիրը, կոռուպցիոն ռիսկերը, զինծառայողների առողջական խնդիրները և զինծառայությանը զորակոչիկների պիտանիության հարցը:

2013 թ-ի դեկտեմբերի 12-ին ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին է ներկայացվել նաև 2013 թվականի գարնանային զորակոչի խնդիրները և առկա մտահոգությունները դրա կազմակերպման և անցկացման ընթացքում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից բազմիցս իրականացվել են զորակոչը և զինծառայությունը կարգավորող օրենսդրության վերլուծություններ, որոնց հիման վրա պատրաստվել և ներկայացվել են առաջարկություններ[3]: Մասնավորապես՝ 2013 թ. գարնանային զորակոչի ընթացքում զորակոչի գործընթացի և զորակոչիկների իրավունքների վիճակի մասին զեկույցը, 2012 թ-ին ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույցը, Բժշկական ծառայության հետ կապված զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների խախտումների վիճակի վերաբերյալ զեկույցը:

---

[2] http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=15&month=04&year=2013&NewsID=5830&lang=arm
http://www.parliament.am/news.php?do=view&cat_id=2&day=27&month=06&year=2013&NewsID=6011&lang=arm
http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111168&showdoc=2135&lang=arm
http://www.parliament.am/committees.php?do=show&ID=111168&showdoc=2136&lang=arm

[3] http://hcav.am/wp-content/uploads/2013/11/%D4%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9_2013_%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf
http://hcav.am/publications/%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BE%D5%AB%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A8-%D5%B0%D5%B0-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%A1%D5%AE/
http://hcav.am/wp-content/uploads/2012/12/%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_2012.pdf

2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԴԻՄԱԾ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2013 թվականի ընթացքում զինծառայությանն առնչվող հարցերով կազմակերպություն է դիմել 55 անձ, որից 33 զորակոչիկ, 9 ժամկետային շարքային կազմի զինծառայող, 9 սպա, 3 զորացրված զինծառայող և 1 նախկին սպա:

Կազմակերպություն դիմած անձանցից 18-ին տրամադրվել է (13 զորակոչիկ, 2 ժամկետային շարքային կազմի զինծառայող և 1 զորացրված անձ) բանավոր խորհրդատվություն, մյուսների դեպքերով պատրաստվել են պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցումներ, դիմումներ զորակոչի որոշման օրինականությունը վերանայելու, կրկնակի բուժզննության ենթարկելու, բուժումը կազմակերպելու նպատակով տարկետում տրամադրելու հետ կապված հարցերի վերաբերյալ: Կազմակերպության բժիշկ-փորձագետի կողմից իրականացվել է զորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի հետազոտման ակտերի և ախտորոշումների ուսումնասիրություն և վերլուծություն:

33 **զորակոչիկներից**[4] 29-ը դիմել են առողջական վիճակի զննության հետ կապված հարցերով, 2-ը՝ կրթական հիմքերով զինծառայությունից տարկետում ստանալու հարցի իրավական կարգավորման վերաբերյալ պարզաբանման համար, 1-ը՝հանրապետական բժշկական զննություն անցնելու նպատակով իր բնակավայրից մայրաքաղաք մեկնելու համար ՊՆ-ի կողմից տրամադրված տրանսպորտային ծախսի հետ կապված հարցով:

9 ժամկետային շարքային կազմի **զինծառայողներից** 8-ը դիմել են առողջական խնդրի հիմքով զինծառայությանը պիտանիության հարցով, 1-ը՝ բնակության վայրին մոտ գտնվող զորամասում ծառայելու վերաբերյալ իրավական կարգավորումներին ծանոթանալու նպատակով:

3 **զորացրվածներից** 2-ը դիմել են զինծառայության ընթացքում ձեռք բերված առողջական խնդիրների հետ կապված հարցով: Մասնավորապես՝ նրանցից մեկի համար ՊՆ կողմից բուժում ստանալու աջակցության տրամադրման և ծառայության ընթացքում ոչ պատշաճ բժշկական աջակցության հետևանքով առողջությանը վնաս հասցնելու վերաբերյալ

[4] Քանի որ ՀՀ նախագահի «ՆՀ-283-Ն» հրամանագրով 2013թ. աշնանային (ձմեռային) զորակոչն անցացվել է 2013թ. դեկտեմբեր - 2014թ. հուվար ամիսների ընթացքում, ապա սույն զեկույցում ներառված է նաև 2014 թ-ի հուվար-փետրվար ամիսների տվյալները: (http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86521 - ՀՀ նախագահի հրամանագիրը 2013 թվականի ձմեռային զորակոչ անցկացնելու և զորացրում կատարելու մասին)

քրեական գործ հարուցելու հետ կապված, իսկ մյուսի դեպքում՝ թույլ տված խախտումների համար զորամասի սպայակազմի նկատմամբ ծառայողական քննություն նշանակելու հետ կապված: Երրորդ զորացրված անձի խնդիրը կապված է եղել զինծառայության ընթացքում վերջինիս նկատմամբ հարուցված քրեական գործի հետ, որը շարունակվել է նաև զորացրումից հետո:

Կազմակերպություն դիմած 9 **սպայից** 8-ի խնդիրը կապված է իրենց կողմից զբաղեցրած պաշտոնից վաղաժամկետ պահեստազոր արձակվելու նպատակով իրավական ընթացակարգերին ծանոթանալու և իրավական աջակցություն ստանալու հարցով: Իրավական աջակցություն ստանալը պայմանավորված է եղել վաղաժամկետ արձակման վերաբերյալ օրենքով սահմանված ժամկետները և ընթացակարգերը վերադաս հրամանատարության և ՊՆ կողմից չպահպանելու հետ:

Կազմակերպությունը դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ սպաների հարցին լուծում տալու հարցով:

Սպաներից մեկի խնդիրը կապված է եղել հաստիքի կրճատման պատճառով սպաների ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման հետ:

Նշված 9 սպաների իրավական աջակցության արդյունքում 7-ի խնդիրը լուծվել է և նրանց բոլորի վերաբերյալ կայացվել է պահեստազոր արձակվելու մասին որոշում: 2 սպայի գործը դեռևս գտնվում է ընթացքում:

Կազմակերպություն դիմած 1 **նախկին սպայի** խնդիրը վերաբերել է աշխատանքային ստաժի հաշվարկին:

Կազմակերպությունը մտահոգված լինելով վաղաժամկետ պահեստազոր արձակվել ցանկացող սպաների նման հոսքով՝ իրականացրեց դրան հանգեցնող պատճառների ուսումնասիրություն: Արդյունքներն առանձին գրությամբ ներկայացվեց ՀՀ պաշտպանության նախարարին, տեղի ունեցավ նաև աշխատանքային հանդիպում ՀՀ ՊՆ կադրերի վարչության աշխատակիցների հետ: Ներկայացվեց սպաների իրավունքներին վերաբերող մտահոգությունները և քննարկվեց դրանց լուծման ուղիները:

ՀՀ ԶՈՒ սպաների իրավունքների վիճակի մասին տեղեկանքը ներկայացված է Հավելված 1-ում:

Զորակոչի և զինծառայության հարցերով Կազմակերպություն դիմած անձանց խնդիրները ամփոփ ներկայացված են գծապատկեր 1-ում:

Գծապատկեր 1.



Բացի կոնկրետ գործերով պաշտպանական գերատեսչությանը կամ նրա ստորաբաժանումներին հարցումներ հասցեագրելուց, կազմակերպությունը հարցումներ է ուղարկել մասնավորապես «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքների որոշ դրույթների վերաբերյալ պաշտոնական պարզաբանումներ ստանալու, զինծառայության ընթացքում մահվան դեպքերի, զինծառայողներին տրվող տույժերի և խրախուսանքների, տրամադրվող արձակուրդների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Ստորև ներկայացվում է կազմակերպության կողմից պաշտպանության նախարարությանը և առընթեր մարմիններին հասցեագրված գրությունների և հարցումների ընդհանուր պատկերը գծապատկերների միջոցով:

Գծապատկեր 2.



Գրությունները մեծ մասամբ հասցեագրված են եղել ՀՀ պաշտպանության նախարարին:

Մեկական գրություն ուղարկվել է Վանաձոր և Մասիս քաղաքների զինվորական կոմիսարներին զինծառայողի առողջական վիճակի հետազոտությունների ակտերի պատճենները և զինծառայությանը պիտանի ճանաչվելու վերաբերյալ որոշման պատճենը ստանալու նպատակով, 1 գրություն ՀՀ առողջապահության նախարարություն՝ զինծառայողի բուժման հետ կապված ծախսերի մասին տեղեկություն ձեռք բերելու կապակցությամբ, 2 գրություն ուղարկվել է ՀՀ զինվորական դատախազություն՝ զինծառայության ընթացքում մահացածների գործերի վերաբերյալ, 1 գրություն ուղարկվել է ՀՀ վարչապետին՝ պատճենը՝ ՀՀ պաշտպանության նախարարին, ՀՀ պաշտպանության նախարարի անգործությունը վերացնելու և սպայի խախտված իրավունքները վերականգնելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

Գծապատկեր 3–ում և 4-ում ներկայացված են ՀՀ ՊՆ ուղարկված գրությունների և ըստ «Տեղեկատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների նրանց վերաբերյալ տվյալները:

Գծապատկեր 3.



Գծապատկեր 4.



Մեկ անձի կամ հարցի վերաբերյալ կազմակերպության կողմից ուղարկված մի քանի գրություններին որոշ դեպքերում պատասխանվել է մեկ գրությամբ:

2013 թ-ին ՊՆ և նրա ստորաբաժանումներին հասցեագրված գրությունների 46 տոկոսի դեպքում պատասխանները ստացվել են օրենքով սահմանված ժամկետներում, իսկ 54 տոկոսի դեպքում դրանք ստացվել են օրենքով սահմանված ժամկետների խախտմամբ:

Ինչպես նկատում ենք գծապատկեր 3-ից՝ պատասխանի տրամադրումը կարող է հետաձգվել 5 օրից մինչև 1.5 ամիս ժամանակով, որն էական նշանակություն կարող է ունենալ քաղաքացու խնդրի լուծման համար:

Եթե համեմատենք 2012 թվականին ուղարկված գրությունների և ստացված պատասխանների արդյունքների հետ, ապա գծապատկեր 4-ից կարող ենք տեսնել, որ 2012 թ-ին մոտ կեսի դեպքում է եղել օրենքով սահմանված ժամկետների խախտում: Սակայն եղել են դեպքեր, երբ գրությանն ընդհանրապես պատասխան չի տրամադրվել:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ ՊՆ և առընթեր մարմինների կողմից կազմակերպության կողմից ուղարկված գրությունների կեսի դեպքում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները չեն պահպանվում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2013 թվականի գարնանային[5] և ձմեռային[6] զորակոչերի ընթացքում առանձնացրել ենք մի քանի մտահոգիչ խնդիրներ, որոնք գոյություն են ունեցել զորակոչի կազմակերպման և իրականացման ընթացքում:

- **Զորակոչի կազմակերպման գործընթացի և նախազորակոչային տարիքի անձանց և զորակոչիկների փորձաքննության իրականացման խնդիրները**

Ինչպես նախորդ զորակոչերի ընթացքում[7], 2013 թ-ի գարնանային և ձմեռային զորակոչերի ընթացքում ևս զորակոչիկների համալիր բուժզննություն չի իրականացվել: Արդյունքում, առողջական լուրջ խնդիրներով զորակոչիկները ենթարկվել են զորակոչի:

Չնայած առողջական վիճակի հետազոտության արդյունքներին՝ զորակոչիկներին շատ դեպքերում չի տրամադրվել կրկնակի բուժզննության ուղեգիր: Այնուհանդերձ, կրկնակի բուժզննությունների իրականացումը շատ հաճախ կրում է ձևական բնույթ և անարդյունավետ է:

Շարունակվել է զորակոչիկներին բժշկական զննության արդյունքների եզրակացության չտրամադրելու արատավոր պրակտիկան՝ չնայած այն հանգամանքին, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված է անձի այդ իրավունքը:[8]

Ըստ ՊՆ ներկայացուցիչների մեկնաբանության՝ նշված եզրակացության պատճենը կարող է տրամադրվել զորակոչիկի կամ նրա հարազատի դիմելու դեպքում: Կազմակերպությունը բազմիցս ահազանգել է, որ պետք է փոխվի մոտեցումը և համապատասխանեցվի նշված օրենքի պահանջին:

Ինչպես արդեն անդրադարձել ենք «Զորակոչը եվ զինծառայությունը կարգավորող օրենսդրական փոփոխությունները եվ իրավական կարգավորման խնդիրները» բաժնում, ՊՆ

---

[5] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=82689
[6] http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86521
[7] http://hcav.am/wp-content/uploads/2012/12/%D5%80%D5%94%D4%B1%D5%8E_%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D5%A1%D5%BC%D5%B8%D5%B2%D5%BB%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_2012.pdf
http://www.hcav.am/attachments_/2df5c_zorakochi_zekuyc.pdf
http://hcav.am/attachments_/5f854_zekuyc_zorakoch_2008[1].pdf
[8] Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին: http://www.arlis.am/

Հրամանով չի կարգավորվում մի քանի հիվանդությունների առկայությամբ զորակոչիկների ծառայության պիտանիության որոշման հարցը, որի հետևանքով շարունակվում է մի քանի հիվանդություններ ունեցող զորակոչիկներին զորակոչելու արատավոր պրակտիկան:

2013 թ-ի գարնանային զորակոչի դիտարկման ընթացքում մեզ հայտնի դարձավ, որ հստակ հրահանգ է իջեցվել զորակոչիկների բուժզննությունն անցկացնող բժշկական հաստատություններին, որպեսզի բուժզննության արդյունքներով բացահայտված առողջական խնդիրները առավել «մեղմ» ձևակերպվեն, որը հանգեցնում է զորակոչիկի առողջական վիճակի իրական պատկերի աղճատմանը:

2013 թ-ի գարնանային զորակոչի ընթացքում արձանագրվել է նախկինում մեկ կամ մի քանի անգամ տարկետում ստացած անձանց զինծառայության զորակոչելու դեպքեր՝ հաշվի չառնելով նրանց առողջական վիճակի որևէ փոփոխություն տեղի չունենալու հանգամանքը: Ի դեպ, առողջական վիճակի վերաբերյալ նույն ախտորոշման հիմքով, եթե նախկին զորակոչի կամ զորակոչերի ընթացքում զորակոչիկին տրամադրվել է տարկետում, ապա գարնանային զորակոչի ընթացքում նրանք զորակոչվել են:

Զորակոչի կազմակերպման ընթացքում առկա են խնդիրներ, որոնց կազմակերպությունը անդրադարձել է նախորդ տարիներին և որոնք մինչ այժմ չեն լուծվել: Տեղական կամ հանրապետական բժշկական զննությունը չի կազմակերպվում զորակոչիկների մարդկային արժանապատվության նկատմամբ հարգանքի հիման վրա: Մասնավորապես՝ բժշկական զննության ենթակա բոլոր զորակոչիկներին հրավիրում են նույն օրը՝ նույն ժամին, որի հետևանքով, որպես կանոն առաջանում են հերթեր և կուտակումներ, և բժշկական զննություն անցնելու համար զորակոչիկները և նրանց հարազատները ստիպված են լինում սպասել մինչև 12 ժամ[9]: Ավելին, բուժզննություն անցկացնելու համար շենքային պայմանները հարմարեցված չեն միաժամանակ մեծ թվով զորակոչիկների ընդունելու համար:

Նշված խնդրի լուծման վերաբերյալ կազմակերպությունը առաջարկել է կազմել բուժզննության իրականացման ժամանակացույց, որը մինչ այժմ չի իրականացվում:

Բուժզննության ոչ պատշաճ կազմակերպման հետևանքով զորակոչիկների իրավունքների խախտման դեպքերին կազմակերպությունը անդրադարձել է հայտարարություններով: [10]

[9] http://hcav.am/events/հայտարարություն-զյումրիում-ևս-զորա/http://hcav.am/events/հայտարարություն-զյումրիում-ևս-զորա/
[10] http://hcav.am/events/տեղեկանք-լուրջ-առողջական-խնդիրներով/

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2012-2013 թթ. ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվել է ծառայության ընթացքում կարգապահության, զինծառայողներին տրվող տույժերի ու խրախուսանքների, արդյունավետ իրավական պաշտպանության, բողոքարկման մեխանիզմների և դրանց արդյունավետության, որակյալ բժշկական օգնության ու սպասարկման վերաբերյալ օրենսդրության և դրա կիրառման ուսումնասիրություն[11]: Նշված հարցերը հիմնականում ներկայացվել են ՀՀ ներպետական օրենսդրության, միջազգային իրավական փաստաթղթերի, ինչպես նաև զորացրված անձանց հետ հարցումների արդյունքների հիման վրա:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ մարդու իրավունքները խախտվում են թե՛ օրենսդրական բացերի հետևանքով, թե՛ օրենսդրության ոչ արդյունավետ կիրառման պատճառով: Մասնավորապես. ՀՀ Զինված ուժերի կանոնագրքերում՝ ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնագրքում, սահմանված չեն զինծառայողների իրավունքների ցանկը՝ ըստ մարդու իրավունքների սկզբունքների: Օրենքով հստակ ներկայացված չեն կարգապահական վաշտում զինծառայողների իրավունքները և պարտավորությունները, որպեսզի այն չնույնականացվի կարգապահական կալանքի հետ, որը գործնականում տեղի է ունենում: Ինչպես այս, այնպես էլ կազմակերպության մյուս ուսումնասիրությունները, որոնք իրականացվել են 2008 թ-ից ի վեր, ցույց են տալիս, որ անձի առողջական վիճակի վերաբերյալ ՀՀ ՊՆ ԿՌԲՀ-ի որոշման օրինակը պարտադիր կերպով չի տրամադրվում անձին: Ավելին, գրեթե երբեք այն չի տրամադրվում նաև այն դեպքերում, երբ զինծառայողը կամ նրա ծնողներն են պահանջում առողջական վիճակի վերաբերյալ ակտերի պատճենները, որը հանգեցնում է բողոքարկման անարդյունավետությանը, քանի որ, չունենալով համապատասխան որոշումը, բնականաբար զինծառայողը չի ունենում նաև հնարավորություն, թեկուզ սուբյեկտիվորեն գնահատելու այն: Պետք է նկատի ունենալ, որ տվյալ պարագայում ՀՀ ՊՆ ԿՌԲՀ-ն համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով վարչարարություն իրականացնող մարմին է, հետևաբար պարտավոր է կայացնել վարչական ակտ, իսկ վերջինս էլ պարտադիր կերպով պետք է հասանելի լինի հենց ակտի հասցեատիրոջը:

[11] http://hcav.am/publications/%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%B8%D6%82-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%82%D5%B6%D6%84%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6/

Նմանապես, օրենսդրորեն ամրագրված չէ զինծառայողի վերաբերյալ ընդունվող յուրաքանչյուր իրավական ակտի (հրամանի, խրախուսանքի, տույժի, զեկուցագրի և այլնի) պարտադիր ծանուցումը և օրինակի տրամադրումը զինծառայողին կամ նրա մերձավոր բարեկամին, որը ևս հնարավորություն չի տալիս զինծառայողին ծանոթանալու իր վերաբերյալ ընդունված որոշման բովանդակությանը:

Առանձին ուշադրության խնդիր է հանդիսանում առողջական խնդիր ունեցող զինծառայողների վաղաժամկետ զորացրման դեպքում անձին փոխհատուցում չտրամադրելու հարցը:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շարունակել է իրականացնել ՀՀ զինված ուժերում մահացության դեպքերի ուսումնասիրություն, որի համար որպես տեղեկատվության աղբյուր հանդիսացել են ԶԼՄ-ներով տարածված նյութերը և մահացած զինծառայողների հարազատների կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Ըստ կազմակերպության ուսումնասիրության արդյունքների՝ 2013 թվականին ՀՀ զինված ուժերում գրանցվել է 30 միջադեպ, որի հետևանքով մահացել է 31 զինծառայող: Նշենք, որ մահացության 2 դեպք արձանագրել ենք նաև ՀՀ ՌԴ զորամասում: Միջադեպերից միայն 14-ի դեպքում է ՀՀ պաշտպանության նախարարությունը և ԼՂՀ պաշտպանության բանակը հանդիսացել տեղեկատվության տարածման առաջնային աղբյուր: Միաժամանակ մահվան 31 դեպքերից 24-ի վերաբարյալ տարածվել է պաշտոնական հաղորդագրություն:

Նախորդ տարիների համեմատ մահացության դեպքերը 2013 թվականին նվազել են, սակայն մահվան ելքերով միջադեպերի թիվը մնացել է գրեթե նույնը (2010-2013 թթ. դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը տե՛ս աղյուսակ 1 - ում):[12]

2013 թ-ին գրանցված մահացության 31 դեպքերից 5-ը հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով է, 8-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու, 7-ը՝ դժբախտ պատահարի, 4-ը՝ առողջական խնդրների և ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման պատճառով, 4-ը սպանության, որոնցից 1-ը՝ դիտավորյալ, 1-ը՝ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման և 2-ը՝ կանոնադրային հարաբերությունների խախտման հետևանքով, 3 դեպք՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետևանք են (տե՛ս աղյուսակ 3):

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ դեպքերից 28-ի առնչությամբ հարուցվել է քրեական գործ: 1 քրեական գործ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին, իսկ երեք դեպքով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Հարուցված քրեական գործերից 4-ի վարույթը հետագայում կարճվել է, 2-ի վարույթը կասեցվել է, 2 գործ ուղարկվել է դատարան, 4 քրեական գործեր գտնվում են դատաքննության փուլում, 1 գործ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին:

[12] Տե՛ս նաև 2013 թվականին մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկանքը՝ http://hcav.am/wp-content/uploads/2014/01/%D5%8F%D5%A5%D5%B2%D5%A5%D5%AF%D5%A1%D5%B6%D6%84-2013.pdf

Հարուցված քրեական գործերից 13-ը դեռևս գտնվում են նախաքննության փուլում: Ընդ որում, վերոհիշյալ դեպքերից մեկի վերաբերյալ, ըստ պաշտոնական տեղեկատվության, ՀՀ ՊՆ քննչական ծառայության որևէ ստորաբաժանումում քննություն չի կատարվել՝ նման դեպք արձանագրված չլինելու պատճառով: Այն դեպքում, երբ լրատվամիջոցներից մեկի տարածած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ՊՆ քննչական ծառայության հասարակայնության հետ կապերի ավագ սպա Մերի Սարգսյանը NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է, որ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ 376-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:[13]

Քրեական գործերից 8-ը հարուցվել է ՀՀ Քրեական օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը, 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 376 հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, 1-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ, 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը[14], 2-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, 1 գործ՝ 104 հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով և 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին եի 13-րդ կետերի հատկանիշներով, 1 քրեական գործ հարուցվել է՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի և 112 հոդվածի 1-ին մասի հատանիշներվ՝ սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով և 3 գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 13-րդ կետերով, 3-ը՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաև ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի,

[13] http://m.news.am/arm/news/154153.html

[14] 26.01.2013թ. կրտսեր սերժանտ Յուրի Հրայրի Գարեգինյանը մարտական դիրքում, իրեն ամրացված ինքնաձիգից կրակահերթ է արձակել նույն զորամասի զինծառայող, կրտսեր սերժանտ Արտակ Գրիգորի Գալստյանի ուղղությամբ և սպանել նրան:
Փաստի առթիվ 27.01.2013թ. հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քր. օր.-ի 104-րդ հոդ. 1-ին մասով:
Նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Յու.Գարեգինյանը նշանակված լինելով մարտական դիրքում որպես դիտորդ, դիտորդի պարտականությունները սահմանված կարգի համաձայն կատարելու արդյունքում է իրեն ամրացված ինքնաձիգով կրակոց արձակել Ա.Գալստյանի ուղղությամբ:
25.06.2013թ. քրեական գործի վարույթը կարճվել է՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 35-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ կետով:

առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ, 1 գործ՝ ՀՀ Քրեական օրենսգրքի 365 հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ, 2 գործ ՀՀ քրեական օրեսնգրքի 377 հոդվածի 2-րդ մասով՝մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը: Մահվան դեպքերից մեկում քրեական գործի հոդվածը չի նշվում ո՛չ մամուլում, ո՛չ պաշտոնական աղբյուրներում (պաշտոնական տեղեկատվությամբ՝ «Թովմաս Առաքելյանի մահվան փաստի վերաբերյալ քրեական գործը՝ ենթակայության կարգով ուղարկվել է այլ մարմին»):

Մահացության դեպքերից 22-ը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության տարածքում, 9-ը՝ Լեռնային Ղարաբաղի:

2010-2013 թթ. զինված ուժերում մահացությունների պատճառը/հետևանքը

Աղյուսակ 1

Տարե թիվ	Հրաղադարի ռեժիմի խախտում	Անվտանգու թյան կանոններ	Ինքնասպա նություն	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Սպանություն			Դժբախտ Պատահար	Առողջական խնդիրներ	Անհայտ պայմաններ	Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ	Միջադեպերի Քանակը	Մահացության ընդհանուր թիվը	Պաշտոնական տվյալներ
					Կանոնա դրային հարաբերու թյուններ	Դիտավորյալ/ անզգուշությամբ սպանություն	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում							
2010	9	3	1	0	24	0	0	2	5	0	0	31	44	54
2011	11	3	9	0	5	1	0	6	2	1	1	36	39	36
2012	12	1	12	0	3	1	0	15	6	0	0	41	50	36
2013	5	0	8	3	2	1	1	7	4	0	0	30	31	-

2010-2013 թթ. զինված ուժերում մահացությունների պատճառը/հետևանքը ըստ տոկոսային հարաբերության

Աղյուսակ 2.

Տարե թիվ	Հրաղադարի ռեժիմի խախտում	Անվտանգու թյան կանոններ	Ինքնասպանություն	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Սպանություն	Դժբախտ Պատահար	Առողջական խնդիրներ	Անհայտ պայմաններ	Անփույթ վերաբերմունք ծառայության նկատմամբ	Միջադեպերի Քանակը	Մահացության ընդհանուր թիվը	Պաշտոնական տվյալներ
2010	20.4 %	6.8%	2.2%	0%	54.5%	4.5%	11.3%	0%	0%	31	44	54
2011	28.2%	7.6%	23.0%	0%	15.2%	15.3%	5.1%	2.5%	2.5%	36	39	36
2012	24%	2.0%	24.0%	0%	8.0%	30.0%	12.0%	0%	0%	41	50	36
2013	16.1%	0%	25.8%	9.6%	12.8%	22.5%	12.9%	0%	0%	30	31	-

2013 թ. զինված ուժերում մահացությունների պատճառը/հետևանքը ըստ ամիսների

Աղյուսակ 3.

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Ինքնասպանություն	Սպանություն			Դժբախտ պատահար	Առողջական խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը	Դեպքերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրության առկայություն
				Դիտավորյալ	Կանոնադրային հարաբերությունների խախտմամբ	Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտմամբ					
Հունվար			1	1			1	2	5	5	5
Փետրվար	2		1						3	3	3
Մարտ		1							1	1	1
Ապրիլ			1						1	1	1
Մայիս					1		2		3	3	2
Հունիս					1		1		2	2	1
Հուլիս		1	3					1	5	5	4
Օգոստոս	1								1	1	1
Սեպտեմբեր						1	2	1	3	4	1
Հոկտեմբեր	1	1	1				1		4	4	4
Նոյեմբեր									0	0	0
Դեկտեմբեր	1		1						2	2	1
Ընդամենը	5	3	8	1	2	1	7	4	30	31	24

Եթե դիտարկենք զինված ուժերում մահացության դեպքերը ըստ պատճառների /տե՛ս աղյուսակ 1 և 2/, ապա կարող ենք եզրահանգել, որ մահացությունների թվի մոտավորապես 22 %-ն է պայմանավորված հրադադարի ռեժիմի խախտմամբ: Ըստ պատճառների մահացությունների թվի նման տարանջատման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ երկար ժամանակ ՊՆ-ն մահացության դեպքերը պայմանավորում էր զինանադարի ռեժիմի խախտմամբ՝ քողարկելով մահացության դեպքերի իրական պատճառները՝ ինքնասպանություն, կանոնադրային հարաբերությունների խախտումներ, դժբախտ պատահարներ և այլն:

Դիտարկելով 2010-2013 թթ. մահացությունների թիվն ըստ առաջացման պատճառների /տե՛ս աղյուսակ 1 և 2/՝ նկատում ենք, որ սպանությունների հետևանքով մահացությունների տեսակարար կշիռը կտրուկ նվազում է, միաժամանակ աճում է ինքնասպանությունների հետևանքով մահացությունների տեսակարար կշիռը նույն ժամանակահատվածում:

Նկատենք, որ 2011 թ-ի համեմատությամբ 2012-2013 թթ. առողջական խնդիրների հետևանքով մահացությունների տեսակարար կշիռը կրկնակի անգամ աճել է:

Մտահոգիչ է դժբախտ պատահարների հետևանքով մահացությունների թվի տեսակարար կշռի աճը:

Մահացության յուրաքանչյուր 4 դեպքից մեկը ինքնասպանության հետևանք է:

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 5-ից, 2011-2013 թթ. նվազել է հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացությունների տեսակարար կշիռը մահացությունների ընդհանուր թվում:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ 2010 թ-ից հետո մահացությունների հանգեցնող պատճառները դարձել են ավելի բազմազան, որը պայմանավորում ենք մահացությունների դեպքերի հաշվառման նկատմամբ պաշտպանական գերատեսչության մոտեցման փոփոխությամբ: Այնուամենայնիվ, հատկապես առողջական խնդիրների և դժբախտ պատահարների հետևանքով մահացությունների թվի տեսակարար կշռի աճը համարում ենք զինված ուժերում հիմնական խնդիրներից մեկը:

Առանձին ուսումնասիրության առարկա է հանդիսացել հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացության դեպքերը:

Գծապատկեր 5.

2010-2014 թթ. (2014 թ. հունվար-ապրիլ)

Հրադադարի ռեժիմի խախտման քանակը

2010-2014 թթ. (2014 թ. հունվար-ապրիլ)

Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհերի թիվը



Ըստ գծապատկեր 5-ի՝ 2010-2013 թթ-ին որոշակի համաչափություն գոյություն ունի հրադադարի ռեժիմի խախտման թվի և դրա հետևանքով մահացության դեպքերի թվի միջև: Այնուամենայնիվ, արձանագրենք, որ 2013 թ-ին 2012 թ-ի համեմատ հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը մոտ 19 տոկոսով նվազել են, մինչդեռ մահացությունների թիվը կրճատվել է ավելի քան 2 անգամ:

Եթե դիտարկենք հրադադարի ռեժիմի խախտումների թիվ/զոհերի թիվ հարաբերակցության դինամիկան, ապա տեսնում ենք, որ մահացության մեկ ելքին հանգեցնող հրադադարի ռեժիմի խախտումների թիվը աճում է (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

Մահացության մեկ դեպքի հաշվարկով հրադադարի ռեժիմի խախտումների քանակը	
Տարեթիվ	**Հրադադարի ռեժիմի խախտման քանակը**
2010 թ.	800
2011 թ.	115
2012 թ.	1356
2013 թ.	2650

Նշված ուսումնասիրության հիման վրա կարելի է եզրակացնել, որ տեղի ունի մարտական հերթապահության կազմակերպման շրջանակում անվտանգության կանոնների պահպանման մակարդակի բարձրացում:

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԵՊՔԵՐԸ

2013 թվականի ընթացքում, ԶԼՄ-ներում և datalex դատական տեղեկատվական համակարգում տեղադրված նյութերով բացահայտել ենք ֆիզիկական բռնության կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող առնվազն 17 դեպք:

Նման դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունը, որպես կանոն, հիմնականում մնում է չհրապարակված և անհասանելի:

Նշված բռնության դեպքերը հիմնականում կապված են հրամանատարների կողմից պարտադիր ժամկետային ծառայություն իրականացնող շարքային զինծառայողների նկատմամբ ծեծի կամ բռնության հետ:

Մեկ դեպքում վիճաբանությունը և հետո ծեծը տեղի է ունեցել պայմանագրային զինծառայողի նկատմամբ: Մեկ այլ դեպքում զինծառայողները վիճաբանության արդյունքում բռնություն են գործադրել միմյանց նկատմամբ ՝ խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքային կանոնները:

2013 թ-ի նոյեմբերի 2-ին լրատվամիջոցներով տարածվեց Կանազի զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում ստացիոնար բուժման մեջ գտնվող 4 զինծառայողների նկատմամբ հոսպիտալի բժիշկների կողմից բռնություն գործադրելու դեպքի մասին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դեպքով իրականացրեց ուսումնասիրություն՝ հանդիպելով բռնության ենթարկված զինծառայողների հարազատների հետ: Հերթական անգամ, ՀՀ ՊՆ քննչական ծառայության կողմից քրեական գործ հարուցվեց ոչ թե բռնություն կատարած պաշտոնատար անձանց, այլ բուժվող և բռնության ենթարկված զինծառայողների նկատմամբ:

Մեղադրվող զինծառայողներից մեկի պաշտպանության նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներգրավվել է փաստաբան:

2013 թվականի ընթացքում զինված ուժերում ֆիզիկական բռնությունների, արժանապատվությունը նվաստացնող եվ անմարդկային վերաբերմունքի դեպքերի ամփոփ նկարագրությունը ներկայացված են Հավելված 2-ում:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

2013 թ-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը անմիջականորեն ներգրավված է եղել զինվորական 9 քրեական գործերով, որոնցից 7-ը զինծառայողների մահացության դեպքերով: Ազգային դատարաններում 2 ավարտված գործով դիմումներ են ներկայացվել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: 9 գործից 6-ում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ներկայացուցիչը ներգրավված է տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, 3 գործով ներգրավված է փաստաբան:

Զինվորական գործերով Կազմակերպության կողմից իրականացվող ռազմավարական դատավարությունները վերաբերում են կյանքի իրավունքի և խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունքի խախտման դեպքերին: Բացի նշված նյութական իրավունքների խախտման դեպքերից, նշված գործերում արձանագրվել են նաև դատավարական նորմերի խախտումներ:

Իրականացված ռազմավարական գործերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կյանքի և խոշտանգումներից և անմարդկային վերաբերմունքից զերծ մնալու իրավունքների խախտման դեպքով նախաքննության իրականացման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից թույլ են տրվում հետևյալ դատահիրավական խախտումները՝ զինվորական հանցագործությունների գործերով վկաներից ցուցմունքներ վերցվում են անազատության մեջ պահելով, որն ուղեկցվում է խոշտանգումների, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորմամբ: Սույն գործերով դատական քննության ընթացքում վկաները հայտարարում են նախաքննության ընթացքում իրենց անազատության մեջ պահելու և դրսևորված վատ վերաբերմունքի մասին, սակայն դրանց վերաբերյալ որևէ որոշում չի ընդունվում դատարանի կամ դատախազության կողմից պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների վերաբերյալ: Վկաներին անազատության մեջ պահելու և նրանց նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ ներկայացված հանցագործության մասին հաղորդումներ են ներկայացվում, սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից չի իրականացվում պատշաճ քննություն:

Այս գործերով դատական քննության ժամանակ ևս շարունակվում են խախտումները: Դատական քննության ընթացքում հիմնականում արձանագրվում են բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն իրականացնելու իրավունքի, մրցակցության սկզբունքի խախտումներ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զորամասերում կատարված դեպքերով գործերը դատական քննության են ուղարկվում ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ նստավայրը Ստեփանակերտ քաղաք: Ըստ կազմակերպության դիրքորոշման՝ զինվորական գործերով դատական նիստերի կազմակերպումը և իրականացումը Սյունիքի մարզի վարչական տարածքից դուրս Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից հանդիսանում է ոչ օրինական, և դատարանը չի կարող համարվել օրենքի հիման վրա ստեղծված դատարան:

Հատկապես հատկանշական է, որ կյանքի իրավունքի խախտման բոլոր գործերով խախտվում է նաև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը: Պետությունը ոչ միայն չի պաշտպանում իր կողմից անմիջականորեն վերահսկվող կառույցում կյանքի իրավունքը, այլև խախտման դեպքում չի իրականացնում արդյունավետ և գործուն քննություն կյանքի իրավունքի շուրջ, չի ապահովում քննության մատչելիությունը զոհի ընտանիքին: Ինչ վերաբերվում է կյանքի իրավունքի խախտման դեպքերում փոխհատուցման հարցին, դա ևս չի իրականացվում, քանի որ ՀՀ-ում գոյություն չունի դրա կարգավորման հստակ մեխանիզմներ:

Նախաքննության ավարտից հետո տուժող կողմին որոշ դեպքերում չեն տրամադրվում քրեական գործի նյութերի պատճենները, որի հետևանքով տուժողները հնարավորություն չեն ունենում մինչ դատական նիստը ծանոթանալ և պատշաճ պաշտպանություն իրականացնել:[15]

Այսպիսով, զինվորական գործերով նախաքննության և դատաքննության նյութերի ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ զինված ուժերում խախտվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով երաշխավորված վատ վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը, որը Կոնվենցիայի իմաստով բացարձակ իրավունք է համարվում և որևէ իրավիճակում դրա խախտում թույլ չի տրվում, 2-րդ հոդվածով՝ կյանքի իրավունքը, Կոնվենցիայի 5-րդ՝ ազատության և անձնական անձեռնմխելիության, 6-րդ՝ արդար դատաքննության, 13-րդ՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի հոդվածներով երաշխավորված իրավունքները, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 14, 15, 16, 17, 18, 19 հոդվածներով երաշխավորված իրավունքները:[16]

15 http://hcav.am/events/%D5%BD%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%AB-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A6%D5%AB-%D5%A8%D5%B6%D5%A4%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D6%80-%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5/

16 http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, 2013 թ-ին զինված ուժերում մարդու իրավունքների խախտումների ուսումնասիրության տվյալների հիման վրա ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

Զինվորական օմբուդսմենի վերաբերյալ

1. Ապահովել քաղաքացիական հասարակության մասնակցությունը մարդու իրավունքների ռազմավարության գործողությունների պլանով նախատեսված զինվորական օմբուդսմենի ինստիտուտի ներդրման աշխատանքներում:

Զորակոչի վերաբերյալ

1. Զորակոչիկների՝ ըստ առողջական վիճակի զինվորական ծառայությանը պիտանիության հարցը կարգավորող իրավական նորմերը սահմանել օրենքով
2. Իրականացնել զորակոչիկների առողջական վիճակի համալիր բժշկական զննություն և բացառել առողջական խնդիրներով քաղաքացիների զինվորական ծառայությունը
3. Սահմանել մի քանի հիվանդությունների առկայության դեպքում զինվորական ծառայությանը զորակոչիկների պիտանիության որոշման կարգը՝ բացառելով նրանց զորակոչը:

Զինվորական ծառայության վերաբերյալ

1. Մշակել սպաների զինվորական ծառայության ճանապարհային քարտեզը՝ ներառելով նրանց պաշտոնական առաջխաղացման, սոցիալական ապահովության, ծառայության պայմանների և իրավական պաշտպանվածության խնդիրների հստակ ընթացակարգեր
2. Ներքին կարգապահական կանոնագրքերում սահմանել զինծառայողների իրավունքների հիմնադրույթները, բողոքարկման հստակ և արդյունավետ մեխանիզմներ
3. Սահմանել ՀՀ պաշտպանության նախարարի կողմից ՀՀ Ազգային ժողովին ՀՀ զինված ուժերում տարեկան զեկույցի ներկայացման պարտադիր պայմանը

Զինվորական քրեական գործերի քննության վերաբերյալ

2. Ապահովել մահացության յուրաքանչյուր դեպքով արդար դատաքննության իրականացումը
3. Ապահովել զինվորական քրեական գործերով վկաների պաշտպանության արդյունավետ միջոցներ

4. Ապահովել հրամանատարների, զինծառայողների, զինվորական քննչական և իրավապահ մարմինների ներկայացուցիչների կողմից բռնության և մարդու արժանապատվությունը նվաստացնող յուրաքանչյուր դեպքով արդյունավետ, բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննության իրականացումը և դրանց արդյունքների հրապարակումը:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՏԵՂԵԿԱՆՔ

2013 Թ-ԻՆ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՍՊԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

2013 թ-ին ՀՀ զինված ուժերի տարբեր զորամասում ծառայող սպաներ դիմել են ՀՔԱ Վանաձորի գրասենյակ իրենց խնդիրների լուծմանն ուղղված խնդրանքով: Նրանց խնդիրները մասնավորապես վերաբերում են ՀՀ զինված ուժերում իրենց ծառայողական պարտականությունները դադարեցնելուն, այն է՝ պահեստազոր արձակելու խնդրանքի դեպքում նրանք, համաձայն «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ իրականացնում են համապատասխան ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցում: Սակայն, վերոնշյալ հարցով վերադաս հրամանատարությանը դիմելուց հետո չի բավարարվում նրանց խնդիրը, եւ նրանք շարունակում են գտնվել ծառայության մեջ: Այնինչ, հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու զեկուցագիրը ստացած հրամանատարը /պետը/ պարտավոր է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագիրը՝ կից գրությամբ, ուղարկել լիազոր մարմնի կադրային ստորաբաժամման ղեկավարին, որը փաստաթղթերը կադրային մարմնում մուտք լինելուց հետո ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում պարտավոր է զինծառայողի ծառայությունից արձակումը համաձայնեցնել շահագրգիռ ծառայությունների հետ եւ ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը ներկայացնել զինծառայողին:

Այսինքն, չնայած, որ օրենքով հստակ ժամկետներ են սահմանված զեկուցագիր ներկայացնելուց հետո ՀՀ ԶՈՒ պահեստազոր արձակելու ժամկետների համար, այն չի իրականացվում պատշաճ կերպով:

Մյուս կողմից, կան դեպքեր, երբ *փոխհատուցման մասին կատարված հաշվարկի հետ սպաները համաձայն չեն եւ գտնում են, որ հաշվարկվել է առավել չափի գումար, քան իրականում անհրաժեշտ է:*

Մյուս մտահոգիչ խնդիրները վերաբերում են *բնակարաններով ապահովման եւ բազմաթիվ արտոնություններից օգտվելու հնարավորության բացակայությանը, կրթական հարցերին:*

Այսպիսով, հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են սպայական կազմի ներկայացուցիչներին շարունակել իրենց ծառայությունը ՀՀ զինված ուժերում, հետեւյալն է.

1. սոցիալական վիճակը, որը պայմանավորված է ցածր աշխատավարձով
2. ՀՀ ՊՆ կողմից սահմանված պարտադիր օգնությունից օգտվելու հնարավորության բացակայությունը
3. առողջարանային հանգստից օգտվելու հնարավորության բացակայությունը, քանի որ դրանից մշտապես օգտվում են նույն մարդիկ, ինչպես վկայում են սպաները
4. բնակարանային խնդիրների չլուծվածությունը, այն դեպքում, երբ տարիներ շարունակ սպաները ընդգրկված են հերթացուցակում
5. առաջին եւ երկրորդ կարգի զորամասերում ծառայող սպաների համար թիկունքային զորամասերում ծառայող սպաների նկատմամբ առավելություն չունենալը՝ ակադեմիայում կամ օրինատուրայում կրթություն ստանալու համար
6. կադրային ոչ հետեւողական եւ ժամանակին փոփոխությունները, ինչպես նաեւ այլ պաշտոնի նշանակելը առանց անձի համաձայնության

ՀԱՎԵԼՎԱԾ 2

2013 Թ-ԻՆ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ԵՎ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴԵՊՔԵՐԸ

1. Էրիկ Մ.-ի և Ալեն Վ.-ին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նրանք, հանդիսանալով ՀՀ ՊՆ X զորամասի 2-րդ գումարտակի զինծառայողներ, կոչումով շարքային, 03.02.2013 թ. զորամասի ճաշարանի պահեստում խախտելով ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքային կանոնները՝ վիճաբանել են իրար հետ, որի ընթացքում բռնություն են գործադրել միմյանց նկատմամբ: *Մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել հրամանատարության հսկողությանը հանձնելը:*[17]

2. Գործի նյութերի համաձայն՝ 27-ամյա Մերուժան Հարությունյանը, զբաղեցնելով ՊՆ թիվ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի ականանետային դասակի հրամանատարի պաշտոնը, կոչումով ավագ լեյտենանտ, այսինքն՝ հանդիսանալով նշված դասակի նախկին պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սենիկ Պետրոսյանի ուղղակի պետը, 2013թ. մարտի 15-ին, տեսնելով, որ Ս. Պետրոսյանը սահմանված արգելքին հակառակ բջջային հեռախոսով խոսում է, դիտողություն է արել Սենիկին եւ հարցրել, թե ինչու վերջինս իրեն տեսնելուց հետո չի թաքցրել հեռախոսը:[18]

   Ս. Պետրոսյանը պատասխանել է, որ նրան չի նկատել, որից հետո Մ. Հարությունյանն անպարկեշտ ձեւով ստորացրել է իր ստորադրյալի պատիվն ու արժանապատվությունը, մասնավորապես մահճակալի վրայից վերցրել է բջջային հեռախոսը ու հարվածել է գետնին, իսկ երբ Ս. Պետրոսյանը փորձել է մոտենալ եւ գետնից վերցնել այն, բռունցքով նաեւ հարվածել է նրա դեմքին:

   Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օր.-ի 360 հոդվածի 2-րդ մասով՝ զինծառայողին վիրավորանք հասցնելը, որը կատարվել է ստորադասի (ենթակայի) կողմից պետի (հրամանատարի), ինչպես նաև պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:

   Խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

3. Դասակի հրամանատարի տեղակալ Աքսեն Բալասանյանը վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադրյալ հանդիսացող շարքային Անդրանիկ Խառատյանի հետ, բռնություն գործադրել, բռունցքով՝ մեկ անգամ, ապա ոտքով՝ մեկ անգամ հարվածել է շարքային Խառատյանի դեմքին՝ քթի ոսկրերի տեղաշարժված կոտրվածքի և ստորակնակապիճային շրջանների արյունազեղումների ձևով նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս՝ առողջության կարճատև քայքայումով:[19]

   Աքսեն Բալասանյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով՝Պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ

[17] http://iravaban.net/33413.html
[18] http://www.migtvr.com/2013/05/blog-post_4453.html
[19] http://www.1in.am/187792.html

պաշտոնական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով, և դատապարտվել 2 տարի ազատազրկման: *Նրա նկատմամբ պայմանական դատապարտություն է կիրառվել և սահմանվել 2 տարի փորձաշրջան:*

4. ՀՀ ՊՆ զորամասերից մեկի պահեստապետ, կոչումով ենթասպա Գագիկ Գևորգյանը շարք չկանգնելու կապակցությամբ արված դիտողության շուրջ ծագած վիճաբանության ժամանակ օձիքից քաշքշել և ձեռքում գտնվող մատյանով հարվածել է մեկ այլ զորամասից իրենց զորամաս գործուղված պարտադիր ժամկետային զինծառայող շարքային Դավիթ Մկրտչյանի դեմքին: Այնուհետև, ըստ մեղադրանքի, ենթասպան ձեռքով հարվածել է այդ պահին իրենց մոտեցած զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ռուբեն Ղարիբյանին, ինչից հետո կրծքավանդակից հրել, այնուհետև ձեռքով հարվածել է նաև նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Դերենիկ Մովսիսյանի դեմքին, և վերջիններիս ու վիճաբանությունը հանդարտեցնելու նպատակով միջամտած նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սևակ Ադամյանի հասցեին տվել սեռական բնույթի հայհոյանքներ:[20]

Ենթասպային մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի երկրորդ մասով՝ զինծառայողին վիրավորանք հասցնելը՝ ստորադրյալի կողմից պետի, ինչպես նաև պետի կողմից ստորադրյալի նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ: *Նրա նկատմամբ սահմանվել է փորձաշրջան՝ 1 տարի ժամկետով:*

5. 22-ամյա զինծառայող, կոչումով լեյտենանտ Մխիթար Սարուխանյանը վիճաբանության մեջ է մտել իր նկատմամբ ստորադրյալ հանդիսացող պայմանագրային զինծառայող, կոչումով շարքային Արամ Բաբայանի հետ և փայտով հարվածել է վերջինիս գլխին՝ պատճառելով կյանքին վտանգ սպառնացող ծանր մարմնական վնասվածք:[21]

Սարուխանյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 1-ին՝ զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, և 112 հոդվածի 1-ին՝ դիտավորությամբ մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելը կամ առողջությանն այլ ծանր վնաս պատճառելը, որը վտանգավոր է կյանքի համար կամ առաջացրել է տեսողության, խոսքի, լսողության կամ որևէ օրգանի կամ օրգանի ֆունկցիայի կորուստ կամ արտահայտվել է դեմքի անջնջելի այլանդակմամբ, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր այլ վնաս է պատճառել առողջությանը կամ առաջացրել է դրա քայքայում՝ զուգորդված ընդհանուր աշխատունակության ոչ պակաս, քան մեկ երրորդի կայուն կորստով կամ հանցավորի համար ակնհայտ մասնագիտական աշխատունակության լրիվ կորստով կամ առաջացրել է հղիության ընդհատում, հոգեկան հիվանդություն, թմրամոլությամբ կամ թունամոլությամբ հիվանդացում՝ պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով, մասերով:

Լեյտենանտ Մխիթար Սարուխանյանին վերջնական պատիժ է նշանակվել ազատազրկում 3 տարի 6 ամիս ժամկետով:

[20] http://www.epress.am/2013/05/29/%D4%B5%D5%B6%D5%A9%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A1%D5%B6-%D5%A4%D5%A1%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A1%D5%BC%D5%BB%D6%87-%D5%AF%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A3%D5%B6%D5%AB-%D5%BD%D5%BF%D5%B8%D6%80%D5%A1.html

[21] http://www.1in.am/215150.html

6. 2013 թ-ի նոյեմբերի 2-ին, երեկոյան 23:30-ի սահմաններում ՖԲ սոցիալական ցանցում Միեր Ղալեչյան օգտատիրոջ կողմից տեղեկատվություն էր տարածվել այն մասին, որ տվյալ պահին «Կանազի» զինվորական հոսպիտալի մոտ ինչ որ աննորմալ դեպքեր են տեղի ունենում: Տեղի բնակիչները պատմել են, որ հոսպիտալից հինգ զինվոր են դուրս եկել, ծեծված, ջարդված, սկսել են օգնություն կանչել, պատահական մեքենաներ են կանգնեցրել, թե մեզ այստեղից փախցրեք, մեզ սպանում են:
Պատմել են, որ այդ զինվորներից երկուսը 41 համարի երթուղային են նստել, թե կտրաքացնենք, հենց հիմա տարեք մեզ: Մի պատահական անցորդ տաքսի է կանգնեցրել, զինվորներից մեկին նստեցրել է տաքսի, փողը տվել վարորդին ու ասել, որ զինվորին տանի այնտեղ, որտեղ կասի:
ՊՊԾ ու Արաբկիրի բազմաթիվ աշխատակիցներ են դեպքի վայր եկել, զինվորներից երկուսին տարել են քաղմաս:

Դեպքից ժամեր անց, նոյեմբերի 2-ի գիշերը՝ նոյեմբերի 3-ին, ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը իր ֆեյսբուքյան էջում հայտարարել է, որ այդ օրը, երեկոյան կայազորային կլինիկական հոսպիտալում երկու զինվորներ, որոնք գտնվել են ստացիոնար բուժման մեջ, վիճաբանություն են սկսել նույն բաժանմունքի զինվորների հետ, որը վերաճել է ծեծկռտուքի: Նրանք հարձակվել են նաև հերթապահ բժշկի վրա, այնուհետև դիմել փախուստի: ՀՀ ՊՆ ՌՈ աշխատակիցները և ՊՆ համապատասխան պաշտոնյաները տեղում իրականացնում են համապատասխան աշխատանքներ: Նա հավաստիացրել է, որ այդ պահին ամեն ինչ վերահսկողության տակ է, եւ խնդրել, որպեսզի չճշտված տեղեկություններ չտարածեն:

Հաջորդ օրը նոյոմբերի 3-ին, արդեն կեսօրին, ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանն իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է նախորդ օրը տեղի ունեցածին ՝ նոր մանրամասներ հաղորդելով, որ այդ պահի դրությամբ փախուստի դիմած 4 զինծառայողներից 3 -ը վերադարձվել են եւ գտնվում են հոսպիտալում: Աշխատանքներ են իրականացվում 4 -րդին հայտնաբերելու ուղղությամբ: Նա ասել է, որ զինծառայողներին վերադարձնել հաջողվել է նաեւ նրանց ծնողների աջակցության շնորհիվ, ինչի համար ՊՆ -ը շնորհակալություն է հայտնել նրանց: Դեպքի առնչությամբ քննությունը շարունակվում է»:

Դեպքից հետո տարբեր լրատվամիջոցներ ներկայացրեցին դեպքի մանրամասները.

Կանազի կայազորային-կլինիկական հոսպիտալում նոյեմբերի 2-ի կեսգիշերին ծեծի ենթարկված ու փախուստի դիմած չորս զինծառայողներից մեկի՝ Դավիթ Մարկոսյանի հայրը՝ Սամվել Մարկոսյանը, «Ժողովուրդ»-ի հետ զրույցում պատմել է կատարվածի մանրամասները և հայտարարել, որ չի լռելու: Ըստ նրա՝ զինվորներին ծեծի են ենթարկել հոսպիտալի պետ Սահակ Օհանյանը, ատամնատեխնիկ Արմեն Հովսեփյանը և հոգեբան Վաղինակ Հովհաննիսյանը:

Մարկոսյանի խոսքով՝ իր որդու նկատմամբ ճնշումները սկսվել են վաղուց. «Տղաս ծառայում էր ՊՆ զորամասերից մեկում, ու այդ ժամանակ զորամասի հրամանատար Գարեգին Պողոսյանի և որդուս միջև վեճ էր տեղի ունեցել: Մայոր Պողոսյանը տղուս ասել էր. «Այ ոչխար, հլա ուղղվի»: Դավիթը գնացել էր մայորի աշխատասենյակ, որպեսզի պարզաբանի վերջինիս կողմից վիրավորանքի պատճառը: Երբ մտել էր աշխատասենյակ, մայորին հարցրել էր. «Էդ ինձ էիք ասո՞ւմ՝ այ ոչխար»: Մայորը պատասխանել էր. «Ոչ միայն էդ եմ ասում, այլև ուրիշ բաներ», և սկսել էր սեռական բնույթի հայհոյանքներ տալ: Դավիթը երկու ձեռքով հարվածել էր մայորի գլխին՝ ականջների ուղղությամբ: Եվ ես պնդում եմ, որ լավ էր արել, ու՞մ հայհոյեր, որ նման բան չանի»: Զինվորի հոր խոսքով՝ այս պատմությունից հետո Դավիթը դատապարտվել էր մեկ տարվա ազատազրկման ու պատիժը կրելուց հետո շարունակում էր իր ծառայությունը Վարդենիսի զորամասերից մեկում:

«Ծառայության ընթացքում որդուս մոտ նյարդերի հետ կապված խնդիրներ առաջացան, և սեպտեմբերի 17-ին նրան տեղափոխեցին Կանազի կայազորային կլինիկական հոսպիտալ: Նշված գիշերն անծանոթ բարի մարդիկ են փրկել իմ երեխային», – պատմել է հայրը:

«Ժողովուրդ»-ը զրուցել է նաև ծեծի ենթարկված Դավիթի հետ: Վերջինս պատմել է, որ իր հետ փախուստի դիմած տղաները եղել են իր ընկերները՝ Ռազմիկը, Արոն և Արշակը. «Ես չգիտեմ, թե ինչից էր սկսվել կռիվը, ձայներ լսեցի կողքից, մտա սենյակ, տեսա՝ Ռազմիկին գցել են գետնին, ծեծում են: Սուտ ա, որ ասում են, թե ծեծել են խմելու համար: Նման բան չկա, քանի որ ոչ մի խմիչքի հետք չեն գտել: Բայց մեզ նենց ծեծեցին, որ ջարդեցինք դռներն ու փախանք: Ռազմիկն ընկել էր փողոցում, ահավոր վիճակ էր»»,– պատմել է Դավիթը:

Ռազմիկ Մանուկյանի մայրը՝ Աննա Կարապետյանը, որ հեռավոր գյուղից է Երևան եկած եղել, «Ժողովուրդ»-ին պատմել է, թե ինքը ոչնչից տեղյակ չի եղել. «Երեխաս ծառայում էր ԼՂՀ զորամասերից մեկում և Կանազի հոսպիտալ էր տեղափոխվել 1 ամիս առաջ: Ես այսօր (նոյեմբերի 5-ին-խմբ.)22 որդուս համար սննդամթերք եմ բերել: Ասացին, թե փախել է: Հիմա ես իմ երեխայից ոչ մի լուր չունեմ, թույլ չեն տվել անգամ՝ մտնեմ, տեսնեմ, թե ինչ վիճակում է: Լսեցի, որ ամենաշատը նրան են ծեծել, բայց մի զանգն ի՞նչ է, դա էլ չեն թողնում»:

Ծեծի ենթարկված Ռազմիկ Մարկոսյանին նոյեմբերի 5-ին Մուրացանի հոսպիտալից տեղափոխել են Կանազի հոսպիտալ: «Ժողովուրդ»–ի հետ զրույցում այս մասին ասել է զինվորի հայրը՝ Սամվել Մարկոսյանը: [23] Մյուս զինծառայողը՝ Դավիթը, ասաց, որ ինքն ու Արոն այս պահին /ամսի 13-ին-խմբ. ՀՔԱՎ/ գտնվում են Կանազի հոսպիտալում, իսկ Արշակն ու Ռազմիկը՝ ռազմական ոստիկանության մեկուսարանում: «Արոն այստեղ անկողնային պառկած է: Մեզ ասել են, որ Արշակի ու Ռազմիկի վիճակը շատ վատ է, իրենք ուզում են դուրս գալ մեկուսարանից, բայց թույլ չեն տալիս, որ վերադառնան հոսպիտալ: Քրեական գործ են հարուցել միայն Արշակի ու Ռազմիկի դեմ»,-պատմեց Դավիթը՝ նշելով որ ինքը երեկ մեծ աղմուկ է բարձրացրել: Դավիթի պատմելով՝ նա իր հեռախոսը տվել էր հիվանդանոցի քույրերից մեկին, սակայն երբ պահանջել է, քույրը նրան ասել է, թե գողացել են. «Կատաղեցի, ո՞նց թե գողացել են, գոռգոռացի, մի խոսքով ինձ հանգստացրին ու ասացին, թե շուտով դու ազատ կարձակվես: :

Նոյեմբերի 9-ին «Ժողովուրդ» թերթի տեղեկացմամբ զինծառայողներ Ռազմիկի, Արշակի և հոսպիտալի ատամնատեխնիկ Արմեն Հովսեփյանի և հոգեբան Վաղինակ Հովհաննիսյանի միջև տեղի է ունեցել առերեսում, որի մասին հայտնել է զինվորներից Արշակի մայրը՝ Լուսինե Բարսեղյանը: Ինչպես իր խոսքում նշել է զինվորի մայրը. «Առերեսման ժամանակ երեխաներն ասել են, որ հոգեբանն ու ատամնատեխնիկը սուտ են ասում, թե իրենք հարբած են եղել: Ավելին, ասել են, որ մտել ու անհիմն կերպով հարձակվել են իրենց վրա»: Զինվորներից մյուսի՝ Արշակի մայրը տեղեկացրել է, որ իրեն թույլ են տվել տեսակցել որդուն: Վերջինս թղթակցին ասել է, որ որդու դեմքին կապտուկների հետքեր կային, բայց տղան հերքել է, որ հարբած է եղել: «Ո՞նց կարելի է Լեռնային Ղարաբաղի հոգեբուժարանում պառկած ու Կանազի հոսպիտալ տեղափոխված երեխայի դեմ քրեական գործ հարուցել: Մեր երեխաներն ասում են, որ իրենց ծեծի ենթարկողներն են հարբած եղել»,- ասել է Արշակի մայրը:[24]

Ըստ նոյեմբերի 14-ին ilur.am-ի[25] եւ galatv.am-ի[26] տեղեկությունների «Նուբարաշեն» ՔԿՀ-ում արդեն մի քանի օր գտնվող Արշակ Արմենի Թորոսյանի եւ Ռազմիկ Ռուբենի Մանուկյանի ծնողները մինչեւ այսօր հնարավորություն չեն ունեցել ոչ միայն տեսակցել իրենց

[22] http://www.1in.am/arm/press_parmenia_227891.html
[23] http://www.slaq.am/arm/news/161918/
[24] http://operativ.am/?p=48256/Երեխաներն-ասել-են,-որ-հոգեբանն-ու-ատամնատեխնիկը-սուտ-են-ասում,-թե-իրենք-հարբած-են-եղել,-Կանազի--հոսպիտալում-ծեծի-ենթարկված-զինվորի-մայր
[25] http://www.ilur.am/news/view/21090.html
[26] http://www.galatv.am/news/view/kanaz-hospital-news14.html

զինծառայող որդիներին, այլեւ՝ հանգուստ եւ սնունդ փոխանցել նրանց: «Մեր երեխաներին ծեծել ու ջարդեն են, տարել գցել են «Նուբարաշեն», մի բան էլ արգելում են հանդիպել: Ես հիվանդ կին եմ, շարժվել էլ չեմ կարող, մի կերպ հասել եմ «Նուբարաշեն», բայց սկզբից խաբում ասում էին՝ ստեղ չեն, հետո էլ, թե չի կարելի իրենց հետ հանդիպել, ինչո՞ւ, հանցագո՞րծ են սարքել արդեն»,-ասել է ծնողը՝ պահանջելով անհապաղ տեսակցություն իր որդու հետ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացված գործողությունները

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դեպքով իրականացրեց ուսումնասիրություն՝ հանդիպելով բռնության ենթարկված զինծառայողների հարազատների հետ: Հերթական անգամ արձանագրվեց, որ ՀՀ ՊՆ քննչական ծառայության կողմից քրեական գործ հարուցվեց ոչ թե բռնություն կատարած պաշտոնատար անձանց, այլ բուժվող և բռնության ենթարկված զինծառայողների նկատմամբ:

Մեղադրվող զինծառայողներից մեկի պաշտպանության նպատակով ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ներգրավվել է փաստաբան:

7. Վաշտի հրամանատար, կոչումով կապիտան Ռուբեն Գասպարյանը առավոտյան մարմնամարզությանը չմասնակցելու կապակցությամբ հայհոյանքներ տալով ծեծի է ենթարկել ժամկետային զինծառայող, շարքային Ա. Նազարյանին՝ սրանով խախտելով մարդու արժանապատվության, հիմնական իրավունքների ու ազատությունների՝ բարձրագույն արժեք լինելու մասին սահմանադրական նորմը ու ՀՀ ԶՈՒ ներքին ծառայության կանոնագրքի մի շարք հոդվածներ:[27]

27-ամյա Ռուբեն Գասպարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասով՝ Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ՝պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:

Նրա խափանման միջոցը ստորագրությունն է չհեռանալու մասին: Սակայն նրա նկատմամբ *կիրառվել է համաներում ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ, քրեական գործի վարույթը կարճվել է և ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել:*

8. Մայոր Մարտիրոսյանը զորամասն ինքնակամ թողնելու համար 2013 թվականի հունիսի 7-ին դիտողություն է արել իր նկատմամբ ստորադրյալ հանդիսացող ժամկետային զինծառայող, շարքային Տ. Գրիգորյանին, հայհոյանքներ է տվել վերջինիս ու ոտքով մի քանի անգամ հարվածել զինվորի ոտքին: Նույն օրը զորանոցում բջջային հեռախոսով խոսելու համար մայոր Մարտիրոսյանը դիտողություն է արել շարքային Է. Զաքարյանին, հայհոյել ու ծեծել է նրան՝ ձեռքերով մի քանի անգամ հարվածելով նաև այս զինվորի գլխին:

50-ամյա մայոր Մարտիրոսյանին 2 դրվագով մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 358.1 հոդվածի 2-րդ մասով՝ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ ստորադասին (ենթակային) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը ստորադասի (ենթակայի) կամ նրա մերձավորի նկատմամբ՝պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս

[27] http://www.1in.am/219356.html

ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:: Նրա խափանման միջոցը ստորագրությունն է չհեռանալու մասին:

Կիրառվել է համաներում ՀՀ Անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ, քրեական գործի վարույթը կարճվել է և նա ազատվել է պատժից:

9. Դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Գևորգ Դավայանը, գտնվելով մարտական հերթապահությունում, վիճաբանել է զինծառայող շարքային Վելիցյանի հետ, որի ընթացքում անցել է պաշտոնական լիազորությունների սահմանները՝ «խստապահանջ սպայի տպավորություն թողնելու և որպես հրամանատար ինքնահաստատվելու շարժառիթներով» հարվածել շարքային Տարոն Վելիցյանի դեմքին: Նրան մեղադրանք առաջադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի (պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը կամ դրանք կատարելու սպառնալիքը): [28]

Նույն հոդվածով մեղադրանք է առաջադրվել նաև շարքայինին՝ հրամանատարի հետ վիճաբանության մեջ մտնելու և Գևորգ Դավայանի կրծքավանդակին բռունցքով հարվածելու համար: Շարքայինը նաև կալանավորվել է, իսկ հրամանատարի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին:

ՀՀ քր. օր.-ի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, ամբաստանյալ Գևորգ Խաչատուրի Դավայանի (հրամանատար) կատարած հանցանքը (Պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:), համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին:

ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված, ամբաստանյալ Տարոն Արշակի Վելիցյանի (շարքային) կատարած հանցանքը (Զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին (հրամանատարին) ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը պետի (հրամանատարի) կամ նրա մերձավորի նկատմամբ՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:), համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի դասվում է միջին ծանրության հանցանքների թվին:

Դատարանի որոշմամբ՝ Տարոն Արշակի Վելիցյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման մեջ և դատապարտել կարգապահական գումարտակում պահելով՝ 3 ամիս ժամկետով:

Գևորգ Խաչատուրի Դավայանի նկատմամբ կիրառվել է համաներում՝ ՀՀ անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ և նա ազատվել է պատժի կրումից:

10. Յուրի Խաչատուրովի որդին ալկոհոլի ազդեցության տակ դաժան ծեծի է ենթարկել Դիլիջանի հրետանային զորամասի չորս ժամկետային զինծառայողների, որոնցից երեքը տեղափոխվել

[28] http://pastinfo.am/hy/node/18086

են Վանաձորի հոսպիտալ: Իսկ Զորիկ անունով զինվորը, ում վիճակը չափազանց ծանր է, Խաչատուրովի որդին իր մեքենայով տեղափոխել է Երևանի հիվանդանոցներից մեկը:[29]

Mamul.am-ի հետ զրույցում ՊՆ մամուլի քարտուղար Արծրուն Հովհաննիսյանը լուրն անհիմն է համարել և հավելել, որ Խաչատուրովի որդին վերջին անգամ այդ զորամասում գտնվել է իրեն վերագրվող արարքի դեպքից մոտ տասն օր առաջ:[30] Այս տեղեկատվության մասին այլեւս մանրամասներ չեն հրապարակվել:

11. Ըստ մեղադրանքի՝ Մկրտիչ Մզիկյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ ծառայելով թիվ 33651 զորամասում՝ որպես հրամանատար,2013թ. փետրվարի 3-ին,ժամը 15.00-ի սահմաններում,անցնելով իր պաշտոնեական լիազորությունների սահմանը, կատարել է իշխանազանցություն՝ծեծի է ենթարկել շարքային՝ Խաչիկ Եփրեմյանին:[31]

Բացի այդ, 2013թ փետրվարի 7-ին,ժամը 22.30-ի սահմաններում, խստապահանջ հրամանատարի տպավորություն թողնելու, ենթակա անձնակազմի մոտ անառարկելի հեղինակություն ձեռք բերելու նպատակով, վիրավորական արտահայտություն է արել արթուն հերթափոխի դիտորդ, շարքային Մակար Ստեփանյանի հասցեին, ապա ծեծի է ենթարկել Մակար Ստեփանյանին՝ բռունցքով երեք անգամ հարվածելով նրա ուսին, մեկ անգամ ապտակելով նրա պարանոցին:

Մկրտիչ Մզիկյանին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով՝ խափանման միջոց ընտրելով չհեռանալու մասին ստորագրությունը:

Դատարանի որոշմամբ Մկրտիչ Մզիկյանը ենթարկվեելու է կալանքի 1 ամիս ժամկետով:

12. Սևակ Աբրահամյանը, հանդիսանալով թիվ N զորամասի զինծառայող, կոչումով փոխգնդապետ, անցնելով իր պաշտոնեական լիազորությունների սահմանը և չարաշահելով պաշտոնեական դիրքը, իրավունք չունենալով կատարելու այնպիսի գործողություններ, որոնք կարող են ստորացնել ենթակայի մարդկային արժանապատվությունը, ինչպես անձնական այլ, այնպես էլ խմբային շահագրգռվածությունից ելնելով. այն է՝ ալկոհոլային խմիչք օգտագործելու պատճառով ծեծի է ենթարկել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող ժամկետային զինծառայողներ Ն. Հովհաննիսյանին , Շ. Կիրակոսյանին, Ալ. Գլջյանին և Վ. Աղաջանյանին:

Աբրահամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով՝ Պետի (հրամանատարի) կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը, ինչպես նաև իշխանության անգործությունը, եթե այդ արարքները կատարվել են շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, և եթե դրանք էական վնաս են պատճառել՝ պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:[32]

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

13. Բագրատ Մաթևոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հանդիսանալով ՀՀ ՊՆ 54574 զորամասի հրամանատար, հանդիսանալով պետ և պաշտոնատար անձ, կոչումով գնդապետ, անցել է ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության

[29] http://operativ.am/?p=22525
[30] http://mamul.am/am/news/37604/%D5%B5%D5%B8%D6%82-%D5%AD%D5%A1%D5%B9%D5%A1%D5%BF%D5%B8%D6%82%D6%80%D5%B8%D5%BE%D5%AB-%D5%B8%D6%80%D5%A4%D5%B8%D6%82-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80-%D5%AE%D5%A5%D5%AE%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%AC%D5%B8%D6%82%D6%80%D5%B6-%D5%A1%D5%B6%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6-%D5%A7-%D5%BA%D5%A1%D6%80%D5%A6%D5%A1%D5%A2%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B4#.Ub6gjSTKzfU.facebook
[31] http://pastinfo.am/hy/node/17441
[32] http://www.pastinfo.am/hy/node/30077

կանոնագրքով նախատեսված պաշտոնական լիազորությունների սահմանը, կատարել իշխանազանցություն՝ 24.01.2013թ. այնուհետև 25.05.2013թ. իր աշխատասենյակում բռնություն է գործադրել իր հրամանատարության ներքո գտնվող զինծառայողներ Գոռ Հակոբյանի և Վարդան Սահակյանի նկատմամբ, պատճառելով էական վնաս զինվորական ծառայության կրման կարգին և վերջիններիս օրենքով պաշտպանվող շահերին:[33]

Դատարանի որոշմամբ՝ Բագրատ Գառնիկի Մաթևոսյանի նկատմամբ պատիժ է նշանակել ազատազրկում 3 տարի ժամկետով: Սակայն «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22–րդ տարեդարձի կապակցությամբ որոշվել է համաներում հայտարարելու մասին» ՀՀ ԱԺ 03.10.2013թվականի որոշման 1–ին կետի 3–րդ ենթակետի համաձայն, Բագրատ Գառնիկի Մաթևոսյանին ազատել պատժից:

14. Վահագն Գրիգորյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2013թ. հունիսի 5-ին, ժամը 09:00-ի սահմաններում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ դիտողություններ է ստացել իր նկատմամբ պետ հանդիսացող՝ Արամ Համբարձումյանի կողմից, որի պատճառով անպարկեշտ ձևով ստորացրել է Համբարձումյանի պատիվն ու արժանապատվությունը:[34]

Այնուհետև, լեյտենանտ Համբարձումյանը Վ. Գրիգորյանին ներկայացրել է վերադաս հրամանատարի մոտ, որտեղ ավագ լեյտենանտ՝ Արտյոմ Մինասյանը ցանկացել է դիտողություն անել Վ. Գրիգորյանին, սակայն Գրիգորյանը անպարկեշտ ձևով ստորացրել է Ա. Մինասյանի պատիվն ու արժանապատվությունը:

Բացի այդ, 2013թ. հունիսի 5-ից մինչև հունիսի 13-ն ընկած ժամանակահատվածում բռնի գործողություններ է կատարել ժամկետային զինծառայող Արթուր Ղազարյանի նկատմամբ, ծաղրուծանակի ենթարկել նրան, ինչի հետևանքով Ա.Ղազարյանը գտնվել է հոգեպես լարված վիճակում:

Դատարանը Վահագն Գրիգորյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ ծեծելով կամ այլ բռնի գործողություններ կատարելով, 360 հոդվածի 2-րդ մասով՝ Զինծառայողին վիրավորանք հասցնելը, որը կատարվել է ստորադասի (ենթակայի) կողմից պետի (հրամանատարի), ինչպես նաև պետի (հրամանատարի) կողմից ստորադասի (ենթակայի) նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ՝ պատժվում է զինվորական ծառայության մեջ սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ կարգապահական գումարտակում պահելով՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով, նախատեսված 2 դրվագով հանցագործություններ կատարելու համար ու վերջին հաշվով *դատապարտել է պատժի՝ 6 ամիս կարգապահական գումարտակում պահելու ձևով:*

15. 2013 թ-ին տեղի ունեցած երեք մահվան դեպքերի առնչությամբ տեղեկատվություն է տարածվել, որ մինչ մահը զինծառայողների նկատմամբ տեղի է ունեցել բռնություն: Նման տեղեկատվություն տարածվել է 2013 թ-ին մահացած Արման Մուրադյանի, 2013թ. հուլիսի 31-ին մահացած Մանուչար Մանուչարյանի եւ 2013թ. հուլիսի 5-ին մահացած Գաբրիել Լալազարյանի վերաբերյալ: [35]

[33] http://shamshyan.com/old/arm/Z1FEnc1IFf.html
[34] http://www.1in.am/228342.html
[35] http://www.epress.am/2013/12/06/բանակում-մահացած-զինվորի-գործով-տուժ.html

http://www.mil.am/1373096092

http://www.lragir.am/index/arm/0/right/view/85363

http://www.lragir.am/index/arm/0/right/view/85363

http://www.epress.am/2013/12/06/%D5%A2%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B4%D5%A1%D5%B0%D5%A1%D6%81%D5%A1%D5%AE-%D5%A6%D5%AB%D5%B6%D5%BE%D5%B8%D6%80%D5%AB-%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%B8%D5%BE-%D5%BF%D5%B8%D6%82%D5%AA.html

http://news.am/arm/news/165657.html